


ՆՇԱՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ. մարդը, գրականագետը, իմաստասերը, Ե.,

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011, 411 էջ:



Վերջերս ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի և ՀՀ Գրողների միության նախաձեռնությամբ հրատարակվել է «Նշան Մուրադյան. մարդը, գրականագետը, իմաստասերը» խորագիրը կրող ժողովածուն, որն ընդգրկում է հայ անվանի գրականագետ, արվեստաբան Նշան Մուրադյանի որոշ ուսումնասիրություններ, հոդվածներ, հատվածներ նամակներից, ինչպես նաև իր ժամանակակիցների հիշողությունները նրա մասին: Ժողովածուի մտահղացման, նյութերի ընտրության, մշակման և ընդհանրապես գրքի հրատարակման դժվարին, բայց շնորհակալ աշխատանքը՝ թեկուզ որոշ ուշացումով (գիրքը նվիրվում է Ն. Մուրադյանի ծննդյան 100-ամյակին), հաջողությամբ իրականացրել է դուստրը՝ երաժիշտ Արփիկ Մուրադյանը:

Ժողովածուն բաղկացած է երեք մասից: Առաջինն ընդգրկում է մի շարք հայ մտավորականների հիշողությունները Նշան Մուրադյանի մասին: Այդ հուշերում ճշմարտացիորեն, անխարդախ կերպով տրվում է իսկական մարդու, անխոնջ ուսումնասիրողի, գրականության ու արվեստի նվիրյալի իրական դիմանկարը: Այսպես, գրքում զետեղվել են գրողներ Անահիտ Մեկոյանի, Վալտեր Արամյանի, Հովհաննես Գրիգորյանի, գրականագետներ Սերգեյ Սարինյանի, Բյուրակն Անդրեասյանի, Ավիկ Իսահակյանի, Շավիղ Գրիգորյանի, թատերագետ Բախտիար Հովակիմյանի, արվեստաբան Սերգեյ Առաքելյանի, պատմաբաններ Պարույր Մուրադյանի, Ֆրինա Բաբայանի, ՀՀ ժողովրդական արտիստ Վլադիմիր Աբաջյանի և այլոց հիշողությունները, ինչպես նաև Մե-տաքսեի, Մուրեն Մուրադյանի, Մկրտիչ Կորյունի, Էդուարդ Միլիտոնյանի, Լիպարիտ Մարգարյանի, Մարիամ Սահյանի բանաստեղծությունները՝ նվիրված Նշան Մուրադյանին: Բոլոր հեղինակներն էլ, առավել ևս նրանք, ովքեր անձնական շատ շփումներ են ունեցել Նշան Մուրադյանի հետ, սիրով, հարգանքով, ջերմությամբ, դրվատանքով ու ակնածանքով են ար-տահայտվում նրա մասին՝ թե՛ որպես մարդու, թե՛ որպես գրականագետի: Նա «անտարբեր էր տիտղոսների նկատմամբ», «ինչին մոլեգին կրթությամբ տրվում էին բոլորը», նա «այլ աշխարհի մեջ» էր և «թյուրիմացաբար էր ապրում մեր կողքին» (Ա. Մեկոյան, էջ 5-6), նա «ամենառոմանտիկ բանասերն» էր, «այն բացառիկ, բյուրեղյա մաքրությամբ հոգատար մարդն էր իր շրջապատի մեջ, որ ամենայն անկեղծությամբ ուրախանում էր ուրիշների հաջողությամբ և իր անթաքույց հիացմունքն արտահայտում» (Բ. Հովակիմյան, էջ 12-13), նա «գրական աշխարհում և ընկերների շրջանում հազվագյուտ ժողովրդականություն ունեցող մարդ էր», որը «մինչև այսօր հիշվում է որպես մեծ անհատականություն, որպես աշխատասեր գիտնական՝ դուրս բոլոր համեմատություններից» (Ս. Առաքելյան, էջ 17), նա «ծերունիների մեջ ... կատարյալ մանուկ» էր, իսկ «երեխաների մեջ՝ իմաստուն ու բարի ծերունի» (Վ. Արամյան, էջ

29) և այլն, և այլն... Այսպիսի բազմաթիվ գնահատականների է արժանացել «քնքուշ հոգի, ազնիվ սիրտ» ունեցող Նշան Մուրադյանը՝ մեծ մարդն ու ճանաչված գրականագետը, որը «մեր գրական միջավայրի այն քչերից էր, որ, իսկապես, գրականության մարդ էր բառի, նախադասության, արտահայտության որոնող և շինարար, լի բանաստեղծությամբ, երաժշտությամբ, զգայություններով...» (Կ. Դանիելյան, էջ 30): Ինչպես վերհիշում են Ն. Մուրադյանի ժամանակակիցները, նա «ոչ միայն սիրված, այլև բարձր էր գնահատված անխտիր բոլորի կողմից» (Շ. Գրիգորյան, էջ 33), առավել ևս երեխաների, որոնց նա շատ է սիրել և որոնք տարբեր հավաքույթներում միշտ տարվել են «Նշան պապիկի» պատմած հեքիաթներով ու այլ պատմություններով, քանի որ Ն. Մուրադյանն ունեցել է «գիտելիքների վիթխարի պաշար» և եղել է այն հազվագյուտ մարդկանցից մեկը, որի «բանավոր խոսքի հմայքը կարող է մոզական ներգործություն ունենալ ունկնդիրների վրա...» (Հ. Գրիգորյան, էջ 50-51):

Ընդհանրացնելով ժամանակակիցների հիշողությունները Նշան Մուրադյանի մասին՝ կարելի է եզրակացնել, որ նա, ըստ իրեն ժամանակակից մտավորականների, հետագա սերունդներին թողել է ոչ միայն փիլի-սոփայական խոր մտածողությամբ հագեցած հարուստ գրական ժառանգություն, այլև ամբողջ գիտակցական կյանքի ընթացքում հետևել է իր իսկ նախանշած նշանաբանին՝ «դժվարության և դժբախտության դեպ- քում էլ ապրի՛ր արժանավայել» (էջ 63), և, ինչպես իրավացիորեն նշում է գրականագետ Ավիկ Բսահակյանը, «Նշան Մուրադյանն այն եզակի մարդկանցից է, որ ազգային սրբությունները շատ ավելի բարձր է գնահատել, քան սեփական ապահովությունն ու բարեկեցությունը» (էջ 60):

Գրքի երկրորդ մասը, որտեղ ընդգրկվել են վաստակաշատ գրականագետի թե՛ մամուլում սուպագրված, թե՛ անտիպ հոդվածները, կրում է «Նշան Մուրադյանի գրական ժառանգությունից» խորագիրը: Կարդալով այդ հոդվածները, որոնք բերված են ժամանակագրական կարգով, մենք հնարավորություն ենք ունենում հետևելու Ն. Մուրադյանի գրական-արվեստագիտական աշխարհայացքի ձևավորմանն ու զարգացմանը: Եվ վերստին համոզվում ենք, որ գիտնականը՝ իր լայնախոհ մտածողությամբ, բազմաթիվ ունակություններով, սկզբունքայնությամբ, գրական ու թատերական երկերի ինքնատիպ ու յուրահատուկ վերլուծություններով, դատողություններով ու եզրահանգումներով, ուրույն տեղ է զբաղեցնում XX դ. երկրորդ կեսում գործունեություն ծավալած հայ գրականագետների և արվեստագետների փայլուն համաստեղության մեջ:

Ժողովածուի հոդվածաշարի հիմնական մասը կազմում են Շեքսպիրին, նրա ստեղծագործություններին ու դրանց կերպարները մարմնավորող դերասաններին, ընդհանրապես՝ շեքսպիրագիտությանը նվիրված հոդվածները: Դա պատահական չէ, այլ միանգամայն օրինաչափ և հասկանալի, քանի որ, ինչպես նշում են Ն. Մուրադյանին ճանաչողները, Շեքսպիրը եղել է նրա երազանքը, շեքսպիրագիտությունը՝ սիրած գործը, իսկ շեքսպիրագիտությամբ զբաղվելը նրան պատճառել է մեծ բավականություն: Հատկապես մեծ հետաքրքրությամբ են կարդացվում շեքսպիրյան կերպարները անգուգական խաղով մարմնավորող Վահրամ Փափագյանի՝ «Համլետն ինչպես տեսա» ինքնատիպ հետազոտության համար գրված ընդարձակ անոտագիան, «Շեքսպիրի աֆորիզմները», «Մասեղյանի տաղաչափական գյուտը», «Օթելլոյի» նոր բեմադրության մասին», «Համլետի առեղծվածը» և այլ հոդվածներ: Խոսելով Վ. Փափագյանի աշխատության մասին և հետևելով մեծատաղանդ ողբերգակի՝ Համլետի կերպարի վերլուծությանը՝ Ն. Մուրադյանը նկատում է. «Ստացվում է

բեմադրություն, որ Փափագյանինն է միայն և ուրիշինը լինել չի կարող, մի բեմադրություն, որտեղ նա և՛ մեկնաբան է, և՛ կատարող, մի արտիստ՝ բոլոր գործող անձանց դերերում հավասարապես: Ամբողջ այդ անբեմադրելի բեմադրությունը դիտվում է Համլետի հայացքով, նրա կերպարն անձնավորողի և հենց իր՝ Վահրամ Փափագյանի» (էջ 137): Այնուհետև ավելացնում է. «Փափագյանը գրում է ճոխ ու շքեղ մի լեզվով և մի ոճով...», որն էլ ապահովում է «նրա գրքի արտակարգ հաջողությունը ընթերցող լայն շրջանների համար» (էջ 141): Թերևս դժվար է դրանից ավելի ճշգրիտ և ճշմարտացի գնահատել Համլետի կերպարը հանճարեղ խաղով մարմնավորող հայ մեծ դերասան Վահրամ Փափագյանին:

Գիտական առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում «Մասեհյանի տաղաչափական գյուտը» բավական ընդարձակ հոդվածը, որտեղ անվանի գրականագետն անդրադառնում է Շեքսպիրի ստեղծագործությունների գրեթե բոլոր հայ թարգմանիչներին, վերլուծում նրանց թարգմանությունները, դրանք համեմատում իրար հետ, ինչպես նաև բնագրի և Պաստեռնակի կատարած ռուսերեն թարգմանությունների հետ և, ի վերջո, հանգում է այն եզրակացության, որ հայ գրականության մեջ Շեքսպիրի լավագույն թարգմանիչը Հովհաննես Մասեհյանն է, որին հաջողվել է ձեռք բերել «իդեալական հարազատությունը բնագրին, չտանջվել այլևս տողերի համար, թարգմանել է պետք այն, ինչ անթարգմանելի է՝ Ոգին» (էջ 174): Շեքսպիրին հայացնելու գործում Հ. Մասեհյանը երկար է խորհել, մտորել ու որոնել «թարգմանության մեջ ևս այն մեծ ռիթմը գտնելու մասին, առանց որի կենդանի Շեքսպիրը փախչում էր նրա առաջից»: Հ. Մասեհյանի խոր ծանոթությունը Շեքսպիրի ստեղծագործությունների «Ավգուստ Շլեգելի անգերագանցելի համբավ վայելող թարգմանություններին» (նույն տեղում), թարգմանական արվեստի մասին գերմանական ռոմանտիկների հայացքներին, ինչպես նաև տվյալ ժամանակաշրջանում անձանաչելիորեն փոխված հայկական պոեզիային (Թումանյան, Իսահակյան, Տերյան, Վարուժան, Մեծարենց, Միամանթո), որտեղ կիրառվում էին բանաստեղծական գողտրիկ չափեր ու ձևեր, բանաստեղծական նորույթ և գյուտ, նրան օգնեց հանգել այն եզրակացության, որ անհրաժեշտ է շեղվել բնագրի տողից և ազատություն ցուցաբերել բանաստեղծական չափի մեջ, «որովհետև հայերեն բառերը երկար են: Եվ քանի որ բառը չի կարելի կարճացնել, պետք է երկարացնել տողը» (նույն տեղում): Դրանից հետո Հ. Մասեհյանը որոշում է արմատապես վերանայել իր նախորդ թարգմանությունները և ստեղծում նոր գլուխգործոցներ՝ թարգմանության մեջ, հասնելով բարձրակետի, և, դրանով իսկ արձանագրելով, որ «Շլեգելի սխրագործությունը եզակի չէր այլևս, նրա կողքը դրված էր հայերեն Շեքսպիրը» (էջ 175): Հ. Մասեհյանի թարգմանություններն, իրոք, ունեն պատմական մեծ նշանակություն, քանի որ ոչ միայն «շեքսպիրյան խոսքը շողարձակվեց շքեղ մի լեզվով ու ոճով», այլև «հայ բանաստեղծական լեզուն այս նոր դրսևորման մեջ մի անգամ էլ ճանաչեց իրոք եզր չճանաչող իր կարողությունները» (էջ 184):

Ժողովածուում տեղ են գտել նաև Ն. Մուրադյանի գրաքննադատական և թատերագիտական հոդվածները հայ գրողների (Խ. Աբովյան, Մ. Նալբանդյան, Հ. Թումանյան, Հովհ. Հովհաննիսյան, Ա. Իսահակյան, Դ. Դեմիրճյան, Ե. Չարենց, Պ. Սևակ, Դ. Վարուժան և ուրիշներ) և նրանց ստեղծագործությունների, ինչպես նաև հայ դերասանների (Միրանույշ, Պ. Ադամյան, Վ. Փափագյան, Հ. Ներսիսյան) ու նրանց բեմական գործունեության մասին: Այստեղ գրականագետը նույնպես անկողմնակալ, բայց բարյացակամ է արտահայտվում հեղինակների և դերասանների մասին, քննարկում նրանց արժանիքները, առանձին դեպքերում նույնիսկ շատ

գովասանական խոսքեր շոայլում: Դրա հետ մեկտեղ Ն. Մուրադյանը կատարում է նրանց ստեղծագործությունների և կերպարների մանրագնին վերլուծություն՝ տալով ճշմարիտ և անաչառ գնահատականներ:

Սույն ժողովածուն ավարտվում է Նշան Մուրադյանի՝ երիտասարդ տարիքում գրած մի քանի նամակներով՝ ուղղված Հռիփսիկ Հարությունյանին (գրականագետի առաջին կինը): Դրանք հիմնականում ընդգրկում են 1930-1932 թթ. ժամանակահատվածը (մեկական նամակ թվագրվել է 1933 և 1942 թթ.): Միրած էակին ուղղված այդ նամակներում արդեն իսկ զգացվում են Ն. Մուրադյանի գրականագիտական և արվեստագիտական հակումները, առանձնապես նրա խոր ակնածանքը և սերը Շեքսպիրի նկատմամբ: Այդ նամակները համեմված են մի շարք մեջբերումներով հայ բանաստեղծների և Շեքսպիրի ստեղծագործություններից: Կարծես թե հենց այդ տարիներին են սկսում ձևավորվել ապագա իմաստասերի գրականագիտական և արվեստագիտական հայացքները:

Ցավոք, ներկայացվող ժողովածուն զերծ չէ որոշ թերություններից, որոնց չենք կարող չանդրադառնալ: Նյութերը բերված են առանց որևէ դասակարգման, խմբավորման և համակարգման: Ժողովածուն չունի առաջաբան կամ ներածություն. ցանկալի կլիներ, որ որևէ գրականագետ կամ գրքի խմբագիրը այն հակիրճ ներկայացներ ընթերցողին: Գրքի հիմնական նպատակը Ն. Մուրադյանի գրական ժառանգության ամփոփ ներկայացումն է, և, մեր կարծիքով, ավելի ճիշտ և նպատակահարմար կլիներ, որ այն սկսվեր Ն. Մուրադյանի հողվածաշարով, իսկ նրա մասին հուշերը գետեղվեին ժողովածուի երկրորդ մասում: Ինչ վերաբերում է նամակներին, թերևս, ավելի հարմար կլիներ դրանք ներկայացնել հավելվածի տեսքով: Բացի դրանից, գրքում բացակայում են ծանոթագրությունները, որոնք, անկասկած, զգալիորեն կբարձրացնեին ժողովածուի գրական և գիտական արժանիքները:

Ժողովածուում նաև տեղ են գտել տեխնիկական և խմբագրական մի շարք թերություններ, անճշտություններ ու վրիպումներ:

Չպետք է մոռանալ, որ ընթերցողի առաջին ծանոթությունը գրքի հետ սովորաբար սկսվում է անոտագիայից, ցանկից և առաջաբանից: Հետևաբար, դրանց բովանդակության ու ձևավորման վրա պետք էր լուրջ ուշադրություն դարձնել:

Նշված թերությունները բնավ չեն նսեմացնում այն մեծ դերը, որ կատարել է Արփիկ Մուրադյանը ժողովածուն պատրաստելու և լույս ընծայելու գործում: Ա. Մուրադյանը, չլինելով բանասեր, իրոք կատարել է դժվարին, նույնիսկ «տաժանակիր», բայց շատ օգտակար աշխատանք և ստեղծել մի գեղեցիկ հուշաքար իր հոր և շատերի կողմից սիրված Նշան Մուրադյանի անմոռաց հիշատակը հավերժացնելու համար: Իսկ գրքում տեղ գտած թերությունները, մեր կարծիքով, հիմնականում, պատասխանատու խմբագրի և հրատարակչության անտարբեր վերաբերմունքի արդյունք են: Ցավոք, միգուցե ժամանակներն են այդպիսին:

**ԲԵՔԱՐՅԱՆ Ա. Ա.**

Բանասիրական գիտությունների թեկնածու